# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 31-Ա

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 21-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը

1.Վերին Պտղնի համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2017 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ:

2. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3.Ավագանու քննարկմանը ներկայացնել համայնքի տարածքում հուշարձան տեղադրելու հարցը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 32-Ա

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Ընդունել ի գիտություն Վերին Պտղնի համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2017 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հաստատված

Վերին Պտղնի համայնքի ավագանու

2018թ. օգոստոսի 21-ի թիվ 32-Ա որոշմամբ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1 Վերին Պտղնի համայնքում 2017թ-ի ընթացքում պլանավորվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները:

| 1.Նախադպրոցական կրթություն | | | | |
|---|---|---|---|---|
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային ածեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| Խաղահրապարակի գույքի ձեռք բերում | 650.0 | 650.0 | | Շեղում չկա |
| Զուգարանի և նստարանի ձեռք բերում | 580.0 | 580.0 | | Շեղում չկա |
| | | | | |
| Ծրագրի արժեքը համայնքի բյուջե հազար դրամ | - | 1230.0 | | |

| 2 Գիշերային լուսավորություն | | | | |
|---|---|---|---|---|
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային ածեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| Համայնքում փոխարինվել է գիշերային լուսավորության լամպերը էկոնոմ լամպերով | 1300.0 | 1055.5 | | Շեղում չկա |
| լեդ տեսակի լուսատուներովվելով հատ | - | 41 | - | Շեղում չկա |
| Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ | - | 1055.0 | - | -- |

| 3.Համայնքի փողոցների ասֆալտապատում | | | | |
|---|---|---|---|---|
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային արժեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| Համայնքի փողոցների ասֆալտապատում և վերանորոգում | - | 6325.3 | - | Հետիոտների և տրանսպորտային միջոցների համար անվտանգ և հարմարավետ երթևեկության համար |
| | | | - | |
| Ծրագրի արժեքը համայնքի բյուջե | - | 6325.3 | - | - |

| 4.Գեոդեզիական քարտեզագրում | | | | |
|---|---|---|---|---|
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային արժեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| Համայնքի տարածքի գեոդեզիական քարտեզագրում | 340.0 | 340.0 | - | Շեղում չկա |
| | - | | - | |
| Ծրագրի արժեքը համայնքի բյուջե | - | 340.0 | - | - |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՊՈՂՈՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 33-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29,30,31-րդ կետերի պահանջներով,<<Քաղաքաշինության մասին>>օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող՝քաղաքացու սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0016-0064/ 0.0133 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

3. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 34-Ա

### ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2018 թվականի օգոստոսի 17-ի թիվ 01/13.2/4253-18 գրությունը, Հայաստանի Կինոլոգիական, Կինոլոգիա-Սպորտային Միության նախագահի 2018 թվականի օգոստոսի 16-ի և 21-ի դիմումները

**Համայնքի ավագանին որոշում է՛**

1. Տալ համաձայնություն և որպես նվեր ընդունել ազգային արժեք համարվող Հայկական Գամփռի քանդակը և թույլատրել այն տեղադրել Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում դիմումատուի կողմից՛ շահագրգիռ գերատեսչական մարմինների հետ համաձայնեցված՛ քաղաքաշինական նորմերի պահպանմամբ լիարժեք փաստաթղթեր ներկայացնելու դեպքում :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ
3. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ